

ՄԷՃՄՐՈՒՄՅԸ

ՀԱՎԱՏԵԼՈՒ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ

—:ՊԵՐՈՒԼ 1 1/2 ՂԵՂԻՍ ԹՈՒՂԹ:—

ԱԶԳ

Թղթադրամի գնդին տարօրինակ անկմանը երեսնէն յառաջ եկած այս խառնաշփոթ վիճակին առաջը անկարելի ըլլալով հրատարակութիւնը շարունակել ՄԷՃՄՐՈՒՄՅԸ ՀԱՎԱՏԵԼՈՒ ԹԵՐԹԸ այսօրուրէն հարկադրուած է իր հրատարակութիւնը կամովին դադարեցնել առժամանակեայ կերպիւ, մինչեւ որ դրամական կացութիւնն իր կանոնաւորութիւնը գտնէ:

Կ'անդրուի նաեւ ծանուցանել թէ,

ԼՐԱԳՐՈՅ երկամեայ դադարման պայմանաժամը մարտ 10 այսօր լրանալով, յառաջիկայ ԲԵՐՈՒԼ օրուրէն վերստին հրատարակութեան պիտի ըսկըսի:

ՆԵՐԿԱՅՈՒՄ ՎԻՃԱԿՆԵՐ

Ամենածանր տագնապ մը անցնելու վրայ է այս միջոցին մեր գլխին, որոյ նմանը գրեթէ նրբէք տեսնուած չէ օսմ. տաքեգրութեանցը մէջ:

Վերջին պատերազմին բուն աղէտքը ճիշդ հիմայ է որ կը կրեմք և կզգամք:

Պատերազմի միջոցին ի տէր հայրենեաց ամեն զոհողութեան և անձնազրկութեան ինքզինքը ենթարկեց այս ժողովուրդը, զրամական նպաստներ տուաւ, բռնիփախուսութիւն ըրաւ տէրութեան, ծոցի լիրան հանելով 130-150-180 զշի տեղ տըրուաւ և քայմէ առաւ, տուրքերը վճարելէն զատ՝ բանելիք տարուան տուրքերն ալ տուաւ, կառքն ալ տուաւ, ձիերն ալ տուաւ, կրնակի հըգնաւ ալ հանելով օսմ. զօրաց տուաւ, բանակին ռազմավորեց փոխադրելու զնշաւ, զօրաց ամբողջութեանց գծեր շինելու աշխատե:

ցաւ, վերջապէս հօխան 60-70 փրի. կերած հացը այսօր 6-7 զշի ուտելու յանձնառու եղաւ:

Ասոնց ամենքն իալ ըրաւ, տարաւ և յանձնառու եղաւ, բան մը մինակ կ'պակսէր որ ըրած զոհողութիւնն ու ցոյց տըրուած անձնուրութիւնը կատարեալ ըլլաւ:

Այս ժողովուրդը միջին հաշուով 12-14 հարիւր միլիոն զշի հնչիւնդրամ տալով տէրութեան, տեղը 15-16 հարիւր միլիոն զշի թղթադրամ ընդունեց, այն պայմանաւ ու խոստմամբ՝ որ պատերազմին աղէտքը վերջանալուն պէս՝ ընդունած գնովը նորէն Գանձուն ետ դարձնէ և փոխարէն իր հնչուն դրամն ըստանայ, մինչդեռ այսօր իր ձեռքի թղթադրամը տէրութեան տրոց բոլոր պաշտօնատուներէն ալ մերժուած կ'տեսնէ, և չը գիտեր թէ որով տալու և ի՞նչ գնով տալու է, վերջապէս իրեն այնպէս կ'թուի թէ՝ քանի մ'օրէն ուէ արժուորութիւնը պիտի չմնայ այդ թղթին, այնպէս որ այդ 10-12 միլիոն ոսկի տէրութեան փոխ տուող ժողովուրդը չգիտէ թէ ուրիշ պիտի տունէ իր ստակը, և եթէ առնէ իսկ՝ հազիւ 2-3 միլիոն ոսկի պիտի կարենայ տանուլ, և 7-8 միլիոն ոսկին ի կ'րուստ պիտի երթայ, իւր ըրած արքան դրամական նպատակներէն ու օգնութիւններէն զատ:

Ահա ամենէն մեծ աղէտքն այս է, պատերազմին երեսնէն այս ժողովուրդին կրած սոցետիցը վերջին փորձն (էրէօփ) է սա, որոյ դէմ բնաւ տրտունջ մը պէտք չէ հանել, զի արտոնջալն ալ օգուտ մը չունի, թող որ ժողովուրդը այսօր բոլորովին ընդարմացեալ մը մը չեղած է իւր այսքան առնէն ի վեր կըրած աղետիցն ու թշուառութեանցը անտանելի աղղեցու:

Թեանը ներքեւ, մինչև իսկ աստիճան մը անզգայութեան վիճակին հասնելու չափ, վրան կատարուելիք վերաբուժական սոսկալի գործողութեան մը տանջանքները չիմանալու համար ԿՐԵՑԻՐՈՒՄ անզգայութեան դատապարտուած հիւանդի մը նման, որոյ վրայ ամեն տեսակ զարհուրելի գործողութիւն կարելի է ընել:

Իսկ ժողովուրդեան իր քաջասրտութիւնը ցոյց տալու ժամանակն հիմայ է, որ ամեն կերպ զոհողութեան և անձնազրկութեան տակալէն յետոյ, իր ձեռքի սովորական գործառնութեանցը իր միջոց և տալիք տուրքին իր փոխարէն բռնած թղթադրամին գրեթէ անփոխարինելի կերպիւ բարձման ու ոչնչանալուն ալ տակալու արիւնքութիւնը ունենայ:

Մեր ժողովուրդը այս վերջին աղէտքը չէր կրեր գոնէ, եթէ Գանձուն առաջադրած արտաքին մէկ փախուսութիւնը չաշտարէր, առի չ'յաջողեցաւ, ուստի և Գանձն ալ իր պիտոյքը հնչուն դրամով հոգալու համար, որովհետեւ անկարելի էր իրեն ուրիշ միջոցաւ ճարել, ստիպուեցաւ ունեցած բոլոր հատոյթներն ալ հնչուն դրամի վերածել, հատոյթներ՝ որոց փոխարէն թղթադրամ ընդունելու կայսերակն. հրովարտուեալ հանդիսաւոր խոստումներ եղած էր:

Բայց որով է յանցանքը, անշուշտ այն եւրոպացւոց՝ որք Գանձուն չուզեցին փոխ տալ այդ ուղուած ստակը, ուստի և եւրոպացի սեղանաւորաց զբժկամակութիւնը եւ մերժումը պատճառ եղաւ որ իրենց մերժման պատիժը դարձեալ թուրքիոյ այս ժողովուրդը կրէ, իսկ թէ ժողովուրդը արժանի է կըրելու այդ պատիժը կամ ոչ, այս կետք խնդիր ընել չէ այժմ նպատակնիս, զի կերելի թէ սո:

րա ճակատագիրը թշուառութեան չաղատիլ եղած է: Սա միայն ըսել կուզենք թէ՝ եւրոպացին մեզի փոխ ստակ տալ չուզելուն համար այս վերջին և ամենածանր աղետքը հասաւ մեր ժողովուրդեան գլխուն:

Իսկ ասի այն և վերջինն է, զի ժողովուրդը այս դառն փորձըն ալ անցնելու էր, որպէս զի զոհողութիւնը կատարեալ եւ խիզճն ալ հանգիստ բլլայ, եւ ապա բարութեան ու բարօրութեան ճանքան մտնէ:

Այսօր տէրութիւնը գրեթէ թղթադրամ չընդունիր, կամ 0/0ին 20ը պիտի ընդունէ մէկ քանի տրոց համար, որոց ո՛ր տեսակներն ալ տակալին իմացուած չըլլալով, այսօր այնպէս կըմբռնեմք թէ՝ տեղէ մ'ալ թուղթ պիտի չընդունուի, մինակ եթէ այն ալ շարունակէ, հացագործներուն պիտի կարենայ տրուիլ, մէկ մ'ալ Օսմ. Պանքային, եթէ մարդ աչքը կամ գլուխը պատուիլը աչքն առնէ որը 2 ոսկիի համար:

Ինչպէս ըսինք՝ ժողովուրդին ասի աղետից վերջին ծայրը և կամաղետքէն դուրս ելնելու վերջին դուռն է, կամայ ակամայ այս դուռն ալ պիտի անցնի, որ իր կանոնաւոր վիճակը գտնէ, Այսօր իր ձեռքէն թղթադրամ ընդունող մը եթէ չգտնէ, տարակոյս չկայ թէ վերջին ծայր պիտի վշտանայ, բայց ասի՝ իր ըզգացած վերջին վիշտն ու դառնութիւնը պիտի ըլլայ, զի դործառնութիւնը և պիտոյք 1 կամ 2 օր կրնան դադար առնուլ, անկէ ետքը ի հարկէ նորէն պիտի սկսին, և երբ թղթադրամը դադրի հրապարակային գործառնութեանց միջոց մ'ըլլալէ, տարակոյս չկայ թէ՝ անոր տեղ անպատճառ ոսկեղրամը, արծաթ մէճիտը, մէթալիքը և պղինձը երեսն պիտի ելնեն, որոնք թղթադրամը

չըջարեւութեան ելնելէն ի վեր հետզհետէ հրապարակէն քաշուած էին:

Ժողովուրդն ալ երկար առանէ ի վեր կ'փափաքէր որ թղթադրամը վերնայ և գործառնութիւնը ողջ ստակով կատարուին: Շատ օր չտեսնելէ՝ այս բանը պիտի ըլլայ և հասարակութիւնն ալ իր փափաքին հասած պիտի ըլլայ, սակայն դարձեալ իր անձնական զոհողութեամբ պիտի ըլլայ եղբոր այդ... է՛հ, ի՛նչ օգուտ, այս է եղբոր իր ճակատագիրը, — այսպէս կրնանք ըսել, զի ուրիշ բացատրութիւն գործածել ներքին չէ այսօր:

Միանգամայն փութամբ սա ևս ըսել թէ, հասարակութեան մէջ երէկուէն ի վեր սնտոի կապած մը և անտեղի զրոյց մը կայ, որպէս թէ այսօրուէն անդին քայմէն մէկ ստակ պիտի չընէ: Ասի անհիմն կասկած մնէ: Արդարեւ մէկ երկու օրէն գրեթէ բոլոր առուտորներն ողջ ստակի կամ պղինձ դրամի պիտի վերածուին, ասոր տարակոյս չկայ, բայց քանի որ ըստ նորոգ կայս. հրովարտակին՝ Օսմ. Պանքան պիտի շարունակէ դեռ օրը 1000 ոսկի փոխանակել թղթի հետ, և հաջորդօրէն պիտի շարունակեն 500 թղթի փոխարէն հօխայ մը հաց տալ, քայմէն ալ հետեւաբար չկրնար անարժէք մնալ հրապարակին վրայ:

Մինակ սա՛ կետը տարաւ. կուսի տակ կ'մնայ, գիտնալ թէ՛ քայմէն գործառնութեանց եւ առուտորի ասպարէզէն դադրելէն ետքը՝ Պանքան և հաջորդօրէն դեռ ի՛նչքան ատեն պիտի շարունակեն ընդունիր ըստ մեզ՝ ասոր ալ ընդ երկար շարունակելը կասկածելի է և մեզ այնպէս կ'իջարկէ թէ՛ տակաւին 8-10 օր շարունակելէն յետոյ, երբ քայմէն առուտուր ընելը բոլորովին դադրի, ասոնք ալ պիտի դադրեցնեն առնելը:

Իսկ մինչև այն ատեն հասարակութիւնը կրնայ իր ձեռքը մնացած քայմէն ծախսելու բաւական տեղ գտնել և ժամանակ ունենալ:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի.

Երէկ ընդհ. ժողովը գումարեցաւ Ստեփան բաշայի Ա. տնտեսութեամբ, ուր 40 չափ երեսփոխան և բազմաթիւ ունկնդիրք ալ ներկայ կ'գտնուէին:

Ատենական գործողութիւններն աւարտելէն ետքը ժողովը պատրիարքական փոխանորդի մը ընտրութեան խնդիրը ձեռք առաւ, սորա Բ. Դրնէն հաստատուելու մասին անորոշ մնացած չեալ որոշելու համար:

Փոքր ինչ վիճաբանութիւնէն յետոյ, Շահապեան Նազարէթ էֆ. ի առաջարկած բարեփոխութիւնը ընդունուեցաւ, որ կ'ըսէր թէ՛ փոխանակ իրնէն նոր փոխանորդի մը ընտրութեան հաստատութիւնը խնդրելով. նոր պաշտօնեայ մ'աւելցուցած ըլլալիս հասկցնելու, աւելի յարմար էր ըսել թէ՛ պատրիարքական փոխանորդութեան գործելու սահմանը քիչ մ'աւելի ընդարձակուելով այդ փոխանորդը ժողովոյ պիտի նախագահէ:

Սոյն բարեփոխութիւնն ալ ընդունուելէն յետոյ, եղած վիճաբանութիւնն ալ բաւական համարուելով, ժողովը անցաւ պատրիարքական փոխանորդին ընտրութեանը, բայց դեռ քուէհամարը չեղած՝ ունկնդիր ժողովրդեան մէջէն աղմուկ և ժխտք մ'էր բրդաւ:

Ունկնդիր ժողովուրդը սոյն ընտրութիւնը տեսակ մը մեքե. նայութիւն կարծեսով, որպէս թէ ժողովը հիմայ այդ փոխանորդը պիտի ընտրէ, որպէս զի քիչ մը ժամանակէն ետքն ալ զանի պատրիարքական աթոռը բարձրացնէ, այս համոզմամբ սկսաւ աղաղակել թէ՛ ճշմարիտ, իրանորդին պաշտօնը որոշեցէք և և ապա ընտրեցէք, — Պատրիարքին հրաժարականը չընդունուի, — Պատրիարքը դարձեալ պիտի մնայ և ըն:

Ատենական լուրերէն հըրաւիրելէն ետքը ունկնդիր ժողովը, երբ սա մտիկ ընել չուզելով կ'չարունակէր իր ժխտող, ատենական փոխանակ ատենը փակել սպառնալու, աղմկայող տնձր բռնի գուրահանելու համար օստիկան կանչել սպառնացաւ:

Սոյն սպառնալեաց վրայ ունկնդիր ժողովուրդը ևս առաւել գրգռուելով դիւանին վրայ յարձակել փորձեց, իսկ ատենական տնտեսութիւն համարեց պահ մը հեռանալ դիւանէն, և այսպէս ժողովուրդեան անկարգութիւն աղմուկին և ժխտորին մէջ քուէհամարը կատարուելով, Մատթէոս եպսկոպ. իղմիրեան պատր. փոխանորդը ընտրուեցաւ քուէից բացօթեակ առաւելութեամբ:

Սոյն ընտրութեանը մէջ,

3 քուէ առած էր Բարթուղիմէոս Ս. Պրուսայու:

1 քուէ պատր. արդի խորհրդական խորէն Ս. Միսիթարեան:

1 քուէ խորէն Ս. Նարպէյ:

1 յիշատ. Ս. Սերովիան Զմուռնամք ըսել թէ՛ տեղւոյս գաւառացի աղագոյնոց կողմէն բազմատորազիր հանրագիր մը ներկայացուած էր երէկ

ընդհ. ժողովին, որով Ս. Պատրիարքին հրաժարականը չընդունել խնդրելով կ'պահանջուէր որ ընտրութիւն փոխանորդը Պատրիարքին կողմէն հաստատուի, նմա պատասխանատու մնալով:

Ընտրութիւնը կատարուելէն յետոյ Ատենական բաշան Նորէն անցաւ դիւանին գլուխը, և ժողովրդեան աղմուկը հանդարտեցնելէն ետքը, ընտրութեան արդիւնքը յայտարարեց ժողովոյն հետեւեալ իմաստով:

Մատթէոս եպիսկոպոս իղմիրեան պատրիարքական փոխանորդը ընտրուած է, պաշտօն ունենալով ժողովներն գումարել ժողովոց նախագահել եւ որոշմանց գործադրութիւնը հրամայել, ինչպէս նաև Բ. Դրնէն յանձնուելիք թագրերներն եւ ուրիշ գրութիւնները կնքել երբ որ իր ընտրութիւնը հաստատուի Բ. Դրնէն, Նորընտիր փոխանորդը պիտի վարէ աղագոյնի գործերը, մինչև այն ատեն՝ որ Ս. Պատրիարքին ալ հրաժարման պատճառները բարձուելով Ն. Սրբապետութիւնը գայ նորէն իր պաշտօնին գլուխն անցնի, զի Ն. Սրբապետութեան հրաժարագիրը ընդունուած չէ ընդհ. ժողովէն, և շարժառիթ պատճառներուն գէժ ալ ժողովը կ'ընդդէմ. երբ Ս. Պատրիարքը գայ նորէն աղագործոց գլուխն անցնելու, նոյն վարկերէն պիտի դադրի նորոգ ընտրուած սոյն պատրիարքական փոխանորդին պաշտօնը, Սա պիտի 3 ստորագրէ՝ առժամայն պատրիարքական փոխանորդ, և այժմու պատրիարքական փոխանորդը Հայր Սուրբն ալ այսուհետեւ պիտի ստորագրէ մի միայն ճանապարհ դատաստանական խորհրդոյ, որպէս զի պատրիարք երկու փոխանորդաց անուանելու պաշտօնին մէջ չըփոխութիւն մը չծագի:

Սոյն ընտրութիւնն ալ Բ. Դրան ծանուցուելիք գրոյն մէջ, զոր ընդհ. ժողովը պիտի ստորագրէ, պիտի յայտարարուի թէ՛ Ս. Պատրիարք հօր տուած պատճառաբանեալ հրաժարականը ընդհ. ժողովէն չընդունուելով, հարկ համարուած է պատրիարքական փոխանորդութեան պաշտօնին շրջանակը քիչ մ'ալ աւելի ընդարձակել, և սոյն ընդարձակեալ փոխանորդութեան պաշտօնին համար ալ ընտրուած է Մատթէոս եպիսկ. իղմիրեան, որոյ հաստատութիւնը կ'խնդրէ ընդհ. ժողովը:

Իսկ մինչև հաստատութեան վաւերացումը՝ նորընտիր փոխանորդը պիտի սկսի անմիջապէս աղագոյն վարչութեան յատուկ գործերը անօրինելու:

Ատենական տեղի սոյն յայտարարութեանէն ետքը ատենը դադար առաւ ժամը 9ին:

Երեսփ. ժողովն իր պաշտօններն ալ պարտքը կատարեց, ուստի կրնայ այլևս հանդարտ ընել, և քանի որ այս աստիճան տեղեւոր ու դիւակ դարձած ժողովուրդ մը ունի իր առջեւ, դեռ շատ այսպիսի որոշումներ ալ ընտրութիւններ կարող է ընել: Մինակ հասարակութեան մէջ ընդհանուր զրոյց և կասկած մը կայ, որոն որ երթալով հաւատք մը դառնալու վրայ է թէ, այս ընթացքով քիչ օրէն մեր Պատրիարքարանն ալ թափուր պիտի գտնենք, և նորընտիր փոխանորդ սրբազանն ալ, որ իր երկարժամանակեայ տնօրէնման հասած է իրեն համախոհ և դորձակից աղագետէր է. ֆէնտիններուն գործունէութեան ու ջանքեր շնորհիւ, իրեն բոլ աւերակաց վրայ պիտի իջնէ:

Բայց ստոյգը խօսելու համար, մեզի պէս աղագոյն, մեզի պէս ժողովուրդին, ասկէ աւելի աղէկ վիճակ մը չլսուի:

Ամեն աղագործ զիւր գործան:

Մեզի պէս աղագոյն ալ ասանկ երեսփոխանութիւն, և ասանկ պատր. փոխանորդ:

Մարդ յանցանք չունի մենք ենք յանցապարտը:

Հետեւեալ նամակին, որ մեզ զրկուած է ի հրատարակութիւն, պարունակած իրողութիւններն Ուսումն. խորհրդոյ լուրջ ուշադրութեանը յանձնել անհաշու և անհրաժեշտ պարտականութիւն մը կ'համարուի:

... Խմբագրապետ Տէր, ի սէր Ազգին և ի սէր աղագոյնութեան և արդարութեան հետեւեալ յօդուածը հրատարակելիդ կ'խնդրեմ:

Նուստա իսկ, չէմարան վարժարանի նախակրթարանի մէջ, 12 տարի շարունակ դաստիարակութեան պաշտօն վարելով, իմական զաշակերտս գոհացուցած, և նախորդ Հոգաբարձուաց և տեսչաց յարգանքն ընդունած, և ծնողաց համակրութիւնը վայելած էի, և իրաւամբ կ'սպասէի, որ օր մը, մտնաւանդ հետզհետէ ձերութեան օրերուն մէջ կ'վարձատրուիմ աղգէն: Սակայն արդի Տեսչութեան և Հոգաբարձութեան օրով հակառակ յուսոյս՝ ամեն զրկանք, անիրաւութիւն, կարօտութիւն և յանդիմանութիւն, և մինչև անգամ անօթիւն կրելէս վերջը, յանիրաւի և անօրգեալ, պաշտօնէս ալ կը դադրեցնեն, յորում ոչ թէ դոհ, այլ յուսով միայն կ'ապրէի: Ահաւանիկ պատճառը:

Մի քանի շաբաթ յառաջ, վարժարանիս բնակարանի դաստիարակ Պ. Պօգոս էրիզեան, իւր ստացած ամսական թոշակի մասին երբ հոգաբարձութեան տրուեց կ'յայտնէ, հոգաբարձուաց ամենէն խելքը գլուխը համարուածը, հետեւեալ տաւ ըրթինակ պատասխանը կ'տայ:

«Ընտելարանի դաստիարակութեան սլաշտօնը այնչափ

ձեռնարկ պաշտօն մը չէ կարծեմ, չի՛նչ է որ, Ծաղկոյնի դաստիարակ մը չի՛նչ, եթէ Զեքիէն կէ. բռնան ալ բերեմ և քու կեցած տեղը կեցնեմ, կորով է նոյն պաշտօնը կատարելը:

Արդէն վարժարանիս բոլոր դաստիարակներն, տեսուչ խորէն քահանայ փէշիկովանէն ցաւած լինելով, երբ «Զեքիէն կիրակոսն» ալ ձեռնարան վարժարանի հոգաբարձութեան խելով, դաստիարակութեան փափուկ պաշտօնին արժանի դատուեցաւ, ամենքն ալ հրաժարուելով մեկնեցան:

Այս պարագայից մէջ, աշակերտներէն ոմանք, երբ հրաժարեալ դաստիարակաց պատճառը մեզի հարցուցին, հոգաբարձուաց արտասանած արտաւոյց խօսքերն, աշակերտաց կրկնեցինք այսպէս:

— «Քանի որ դաստիարակը մէկ կողմէն զրեթէ անօթի կը մնան, և միւս կողմէն կ'անարգութիւն և ոտնակոխ կ'լինին հոգաբարձութենէն, բնականաբար այս յարկին մէջ՝ չեն կրնար պաշտօն վարել, ասին եղբայրներէնք եթէ Զեքիէն ծնողները չեն զիտեր, երբ երեկոյն տուն վերադառնալք, վարժարանիս ողորմելի վիճակը նկատագրեցէք անոնց»:

Մեր այս արդար դանդաւար տեսուչ քահանային ինչեքուն զիպելով, հայապիսի խօսքերն աշակերտաց բարոյականը աւելի կ'խանգարէր ըսելով զիս պաշտօնէ դադարեցուց, ուրեմն «ճշմարտութիւնը» ըստ տեսչի տրամաբանութեան՝ աշակերտաց բարոյականը կ'խանգարէր և արդեօք սուտ և սխալ եթէ խօսէինք տեսուչ Տէր Զօրը աւելի հաճելի պիտի ըլլա՞յինք...:

12 տարի անընդհատ Աղգ. մանկատան յոռապաղ իմութեանը աշխատող և կեանքը նուիրող պաշտօնէտալ մը այսպէս կը վարձատրուի... Ուսումն և լուսաւորութիւնը աղգերնուս մէջ ո՛րչափ կրնայ յոռապ իրութալ:

Թեպէտ և չափ ուրախ եմ, որ ճիմարան վարժարանի պաշտօնէութեան կամ չաւ ևս է տեսչի գերութեան փշուր ասպարէզէն ազատեցալ, քանզի 350 դասակարգ ընթացիկ դրամ աննշան ամսական թողակ ստանալով, թէ կեանքս մաշեցուցի և թէ բաւական պարտքով մը բռնաւորեցայ, ամսական ալ ազատելով, տղերսնով միմի բանիս մարտկանութեամբ կ'ստանայի, քանիցս անգամ խնդրաւիր մատուցի յաւելման համար, բազում անգամ անօթի լինէի մնալ յայտնեցի, սակայն խղճահօր հոգ տարձութիւնը և ազնուասիրտ տեսչութիւնը զիս խորհէ՛ և խել մը պատրի յայտնելով զբողոքներէն անդին չանցան, և մինչև իսկ շարժեալ երեկոյնիս զոնէ Միշակի զմտաւոր երթալու ազատութիւն ալ բաւարարեցին, դաստիարակութիւնը պարզապէս զերութիւն մը եղած է հոս, և թերևս այլուր: Աստուած ազատէ:

1874-75 թուականին վարժարանիս Տեսչութիւնը ստանձնեց Հայր Խորէն քահանայ փէշիկովան, սակայն բազմաթիւ փորձերով տեսնուեցաւ ու հաստատուեցաւ թէ յիշեալ քահանայն բոլորովին անկարող է յիշեալ նուիրական պաշտօնին, թողեցին սթափելով անմիջապէս տեսչական և ուսուցչական պաշտօնէն դադարեցուցին: Սակայն չենք զիտեր ինչ աներեւելի պատճառներով դարձեալ Տեսչութեան և Ուսուցչութեան փափուկ պաշտօնը յանձնեցին յիշեալ քահանային, ի վնաս թաղիս և վարժարանին:

Տէր Խորէն քահանայն իր տեսչական պաշտօնին բոլորովին ազէտ բլլալուն, և իր խղճին վրայ զիտակցութիւն չունենալուն համար, ճիմարանի պէս վարժարան մը թշուառ վիճակի ենթարկեց այսօր, իւր մէկ ու կէս տարուան պաշտօնավարութեան մէջ ամենէն ընտիր դաստիարակաց յարգն ու արժանիքը չճանչելով, որք են (Յ. Լ. Ֆ. Նաքաշեան, Գ. Է. Ֆ. Պի. քիւճեան, Ն. Է. Ֆ. Կասաբճեան, Ն. Է. Ֆ. Արսլանեան, Գ. Է. Ֆ. Գալֆանեան) այնչափ սիրահարներ իսպեց եւ վերաւորեց, որ յիշեալ էֆէնտիները դառնութեամբ հրաժարեցան ճիմարան վարժարանէս:

Եւ հիմա վարժարանին զբոսաւոր սրահները առանց դաստիարակի մնալով, միայն մանչերու նախակրթարանի մէջ բողոքական օրիւնք մը զետեղելով, Տեսուչ Հայրը ձեռքը ցուպ մի առած և զուպ մի ալ նորէկ կառավարչին յանձնելով, և իւր սովորական բարոյայից խօսքերով, որք են, — չբիւզան պէ՛տի, եւայլ չափերը, օճման ալքը, զաշակերտս կ'կառավարէ, բայց եթէ աշակերտ մը իւր դասին մէջ սխալ թարգմանէ կամ լուծէ չիւշէնչէկ ըսելով սխալ կ'ուզէ:

Ահա այս համառօտ տեսուչութեամբ ճիմարան վարժարանի տեսուչ հօր ազիտութիւնը և կարողութիւնը զինի, թողեցուցին անտարբերութեամբ վրայ կ'ցաւիմք, որ դաստիարակ և դաստիարակաց սովոր ժամանակ, վարժարանը այնպիսի տեսչութեան մը յանձնուած է, յորմէ ոչ յառաջող իմութեան և ոչ բարեկարգութիւն կրնայ բուսաւորի, եթէ այսօր Աղգերնուս մէջ դաստիարակ և դաստիարակ չունինք, որ մեծ գրգռողութիւն պատճառէ համարիմք, հոգաբարձուաց և տեսչաց ամենց ազիտութիւնը և միտաւորական զրութիւնն է պատճառ, որն որ պաշտօնէից հետ խօսելու և վարժարանի եղանակը երբէք չեն զիտեր:

Տէր Խորէն պարագետ, Պաշտօնէն հրաժարուելու անմիջապէս վերջը, Տ. Խորէն հայրէն երեք անգամ նամակներով խղճեցի, որպէս զի իմ կողմանէն փոխանորդ մը կարգելով դատարիմք, (որովհետեւ ես իմ իրաւունքս պաշտպանելու անկարող եմ) սակայն յիշեալ քահանայն իմ օրինաւոր առաջարկութիւնս մերժեց, և

պատասխանատուութենէ բոլորովին ազատելու համար խնդիր հոգաբարձուաց վերալ նետելով, Ուսումնական խորհրդով յղել ուզեց:

Վասն որոյ ներկայ իրողութիւնը, հասարակաց արդար գաղափարները յանձնելու հարկադրեցալ:

Որով մնամ խորին ակնածուութեամբ:

Գեորգ Պ. Պատկան
8 մարտ 1879
Իւսկ. Նոր-Թող

Վերոյիշեալ տխուր և անախորժ նկարագրէն ետք, կ'իմանամք իսկ թէ եւ. օր ճիմարան վարժարանի մէջ, տեսչի հրամանով կ'առնուին, և տեսչի ֆալսեալ կ'ընեն, երբ կառավարչը հիւգերորդ հարուածը պիտի իջեցնէ սղուն ոտուրներուն, ցուպը անտեսին ձեռքին պատահելով ֆալսեալը գետնը կ'զարնէ և տղին աքացի հարուած մը տալով մէկ քանի սոսկալի հայհոյութիւններ կ'ընէ:

Տեսուչ քահանայն հրապարակաւ կ'այտնէ աշակերտաց թէ վարժարանիս պատիժները խիստ պիտի ըլլան, ով որ կընդունի վարժարանս կ'մնայ, և ով որ չընդունիր, վարժարանէս դուրս կ'ընէ և ին. և ին:

Հարկէ պէտք պատրիարքարան հասնող վերջին հեռագիր մը կ'ձեռնուցանէ թէ՛ Զէյթունցի բանտարկեալք մի առ մի մեռնելու վրայ են բանտին մէջ, կուսակալին թոյլ վարձանցը պատճառաւ չարագործութիւններն անպակաս են, կ'սկսեն և Ա. ճէմալի մէջ Զէյթունցիներն Հայոց եկեղեցիներն ու աներ կողպաւորով աւարի առին, Զէյթունի և Մարտի քրիստոնեայք ստիպուած են գաղթելու:

— Ինչ կ'ընենք, ո՛ր կերթանք, ո՛ր է առնեօք պատրիարքական քարտուղար-թարգման մը առնելը, որ Ունեցի բանտարկեալք և կամ հարստահարութեան մը զէպքին համար, անմիջապէս Լոյսարտի, Ֆորնիէի կամ Գորթի վաղել կարտօրար, և պարժանօք հրատարակել ալ կ'տայր իր բրած տեսչականութիւններն:

Ինչո՞ւ չըսեր այժմ մեզ թէ իր չորհրդի քանի՞ Ունեցի ազատեց Հարկէ կամ Մարտի բանտէն, թէ ինչո՞ւ ինքն այլևս Ֆորնիէի կամ Գորթի ստեպատէպ զիմելու արտօրալէն ետ կեցած է:

Ներքին է արդեօք մեզ քան մ'ալ մեք հարցնելու թէ՛ այնքան գառու գոչումներէն և տըք՝ ինչո՞ւ չ'ընէք:

ՀԵՌԱՊԱՆԱԿՈՒԹ

Ս. Բէթըրպուրկ ճմարտ իւր հաւանական կ'հաւատ տեն թէ Ռուսիոյ և Անգղիոյ միջև համաձայնութիւն մը պիտի դրանայ Արեւելեան ինքնորոն համար թէ՛ յԱսիոյ եւ թէ՛ յԵւրոպայ: Այս համաձայնութեան

թիւնն, սուանց զնախկին Պէրլինի դաշնագրութեան, առայժմ պիտի երաշխաւորէ Արեւելեան-Ռուսիոյ ֆրիստունէից կառավարչին, ապա յայն վերապահելով իշխանութեան կանոնաւոր զարդացումն տեսչի կատարեալ ինքնօրինակութեան մտօք:

Հոնորա 21 մարտ
Թայմի Նայելով, Արեւելեան Ռուսիոյ խառն յանձնաժողովոյ զբաղման տեսչութիւնը խնդիր եղեր է:

Այս առաջ հասն

Բարիք 21.— Կղերականք հանրագիր մը կ'պատրաստեն Պ. Ժիւլ Ֆէրրի (Կղեր ուսուցչութեան սրտաքստելու) առաջարկութեանը գէտ:

Առօկանով անուն թիւգանօթակիր նաւամարտկոցը 72 օր ժեռի կղզեաց առջիւր ընկղմելով 40 հոգի կան խղճուած:

Պուրէշ 21.— Պ. Սթուրցա պաշտօնէտալ զէմ խօսեցաւ այն ծրագրին, որով ձերակուտին մէջ Պ. Պ. Կիքա և Գոլայնիսիոն կառավարչէն ամեն կուսակցութեան անձանց մէջ ալ բաղկացեալ դահլիճ մը կ'աղմկ, բնտրութեան միջոցին ազատութիւնը երաշխաւորու համար:

ԳՐԱՄԱՆԱԿ
Այս առաւօտ բացուեցաւ 12:30
Թղթաղրամ 665 (10)
Րուսիոյ 44 50

ՎԵՐՋԻՆ ԼՈՒԻՍԻ

Քայմէի խառնաշփոթութեանը պատճառաւ, առնուտներն ալ խանգարելով երէկուրէն ի վեր բան մ'ալ ուրջ զին չունի:

Թուրքիոյ երէկ մինչև 650 իշխալով, երեկոյն ուշ առնե 590 ի մնաց, իսկ ալեւրա մինչև 560 գործ եղած է:

Այսպէս չմնալով գործը 1-2 օրէն կ'շտկուին և ամեն բան իր կանոնաւորութիւնը կ'գտնէ:

— Կամուրջներուն ալ անցագրին 10 փոյլ իջեցնելով պղինձ դրամ տեսչելու պաշտօնական ծանուցումը թերեւս այսօր կամ վաղը կ'հրատարակուի:

— Բ. Գուրը որոշեր է իր պաշտօնավարաց քայմէի հաշու առած ամսական իշխանին Ունե 35 կամ 40 զեղչելով, մէթալքի վերածել:

— Ռուսիոյ որոշեր է ըստ Պէրլինի դաշնագրին՝ միս. 3 ին Արեւելեան-Ռուսիոյ պարագելու Ասիոյ և Պուրկարիան միացրենելու համար գաշնագրի տեսչութեանը զիմելու պուրկար պատգամաւորութիւն մը ձանբայ եղած է, զոր անգղիա որոշեր է չիւղուել, կրսեն:

— Գուրիէ տՕրինին տնօրէնը, որն որ յունաց անպատարերէն համար, անցեալները զինեալ յարձակում մը կրելով զիշերանց զլուր վերաւորութիւն ու բժշկուել էր, այս անգամ սպաննել սպառնացող անստորագիր նամակ մը ստացեր է:

— Դուր տեսչութեանց չբըլարեալուն մը զրկեր է կրսեն, Րուսիոյ մէջ տաճկաց զէմ Պուրկարներուն նորէն բռնութիւններ ընել սկսելով զանոնք գաղթել հարկադրելուն զէմ:

—Վարդը կ'հաւատէ թէ զհրմանական կառավարութիւնն ալ փափաք յայտնէր է Բ. Դրան նոր կազմակերպ մարտային վարչութեան յանձնաժողովոյ մէջ ինքն ալ իր ներկայացուցիչն ունենալ, և իւր այս փափաքը պաշտօնապէս հաղորդէր է Բ. Դրան :

Դադարից և Անգղիոյ կառաւարկութիւններն այս խնդիրքն ընդունելու գծկամակութիւն չեն ցուցնէր եղեր :

—Այս օրերս Թրնօլայի և Շուսուի մէջ տեղը Օսման-Բազարի փեմակին մէջ տաճկական ապստամբութիւն մը ծագեց է, տաճկներն զէնքի դիմելով վաշտ մը խաղախ զօրաց վրայ յարձակեցին, որոնք տաճկներն ետ քշեցին և աւանդ կորուստ մը կրելու : Թայմզի քաղաքը հետագայի մը կրէ թէ յիշեալ ապստամբութեան առաջին առնուել է :

Ռուսական կառավարութիւնն արդէն իմացեց էր թէ յիշեալ փեմակին տաճիկ ժողովրդի մէջ մեծ պատրաստութիւն մը կայ յիշեալ փեմակին մը հանդիս, ուստի և ճարպիկութեամբ մը յաջողած էր գործը երեւան հանելով սորա տարածումն ու մեծնալն արգելել :

—Գանձը երէկ պաշտօնապէս կ'ընտանցանէ թէ՛ Օսման-Գան պիտի շարունակէ դործը : Եւ օրը 1000 ոսկի քայմէի հետ փոխանակել մարդ զուլա 2 ոսկի տալով :

—Մարաքաղաքի Պարսից դեսպանատունը մեծկամ գողութիւն մը պատահեց էր Մոհ. Թին խան Մարաքալեքէն 400 տնդ. ոսկի ոյ ծրար մ'ընդունեց է պարսիկ հպատակի մը յանձնելու : Դեսպանը զայդ ծրարը իր աշխատութեան գրասենեակէ դնել տուած էր, երբ ծրարին հասցէին տէրը կ'գայ իր աշխատանքի ուղիւ, ծրարն անյայտ եղած էր :

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ ԵՒ

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՃՇԴՈՒԹԻՒՆ

Յրէնկեան վաճառատան բոլոր թիւերն ալ շահող փեմակաւ տոմսաց վաճառումը կ'ազդրի մարտ 15 ժամ ճիշտ 6 1/2 միւն նոյն օրը հրապարակուած ժամ ճիշտ 8 վիճակահանութիւնը կ'սկսի : Տոմսակազին 20 դր. ողջ մէճիտ : Կ'ծախուի Յրէնկեան վաճառատուն Ռոզոն Զարչ. բնդ. ամենը 272 տոմսակ է որոց մէջն է 120 գաղղ. ոսկւոյ արժէքով երկու պատկերներ որ առաջին երկու թուոյն միայն միջանակն է :

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Թարգմանեալ ի Գաղղիականէն

Վերջին տաճկա-առաւիտն պատերազմին վրայով գաղղիներէն լեզուին մէջ մէկ քանի տարբեր հեղինակութեամբ հրատարակուած զօր ծերէն ամենէն անկողմնակալն ու ճշգրտապատումը Ա. Լը Ֆոնի երկն ըլլալով սորա հայերէն թարգմանու-

թիւնը տեար առ տեար սկսած է հրատարակուիլ : Արամեան տպագրութեամբ, մաքուր թղթի վրայ, մեծադիր և քաղաքաւ, իւրաքանչիւր տետրը 2 պատկերօք զարդարեալ :

Այն հրատարակութիւնը խոստ հետաքրքրական եւ միանգամայն օգտակար գործ մը ըլլալով, կը հըրաւիրուի յարգող հասարակութիւնը մէկ մէկ օրինակ ունենալու անկէ, որով Թարգմանչին աշխատութիւնն ու խնամքն արգիւնաւորելուն ալ պատճառ մը ըլլալայ :

Մինչև 2 տետրի հրատարակուած է : Կեդրոնատեղին է Ֆրէնկեան գրատունը, զին թերթին 1 շրշ. արծաթ :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՏԵՏԵԱՆ

ԺՕԶԵՑ ՊԱԼԱՍՄՕ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԿԱՐԱՊԵՏ ԷԺ. ԵՆԱՐԱՆԵԱՆ

Աղէտանդը Տիւմա գաղղիացի մեծանուն վարդապետին գրչէն կ'առնէր զորին ճիշտ այն է վերջին հատորն ալ իրարի Տեախեան եղբարց տպարանէն ի լոյս ընծայուելով Պոլիս հասած է : Այս գեղեցիկ վէպին մէջ ուր Լուի Ժ. Կեանքը փարքն ու վախճանը նկարագրուած են, հետ զհետ կ'ընկալանան Վոլթէն եւ Ռուսո՝ անցեալ դարուն այն երկու մեծ մարդիկը, թագուն գիտութիւններ կ'այտնուին, Մասնուց օթեակները օտարին առջև կ'ընդունին : Ամեն կարգի և հասակի մարդ լըր սիրած նիւթը հոն կ'գտնէ եւն :

Կը ծախուի Լէնի-Ճամի Զինն. կիրքէր ճատախի թիւ 2 Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրովաճառաց քով :

Գին 2 ֆրանք 28 ամթ.

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՅՕՐԻՆԵՑ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Կ'ծախուի Լէնի-Ճամի Զինն. կիրքէր ճատախի թիւ 2 Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրովաճառաց քով :

Գին 1 ֆրանք

ՇԱՐԳ

ՄՈՒՀԱՐԷՊԵՍԻ ՀԻՔԵԱՅԵՍԻ

ՀԵՂԵՆԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՐԳԱՆ ՊԵՅԻ

Վսեմ. Վարդան Պէյի գրչէն ելած սոյն ընտիր պատմութիւնը զոր մինչև հիմայ թերթէ մտնու—լիքեար արագըն մէջ մաս առ մաս կը հըրատարակուի, այս անգամ կրկին արագընութեամբ թերթ առ թերթ հրատարակուի սկսած է մաքուր ապագութեամբ, և որուն ութը երեոէ բաղկացեալ մէկ թերթը 3 դր. և տասը թերթերէ բաղկացեալ մէկ մասը 50 դր. և երեք մասերէ բաղկացեալ մէկ հատորը 30 դր. կը ծախուի ողջ թղթագրամ :

մէկ հատորի համար մայն բաժանորդ կրնայ ընդունուիլ կանխիկ 30 դր. վճարելով :

Բաժանորդագրութեան տեղն է և Պոլիս Սուլթան համում նշան է ֆ Պէրպէրեանի փողոցատունը, Բեւրոյ Թարլա Պաշի Համոկամ ընկ. զօտարանը Խարիէ, Սարաճեանէ շարքըը Հաճի կարողան Սաատուրեանի խանութը :

Թերթ առ թերթ կամ մաս առ մաս վերագրեալ տեղերէ : զատ՝ հետեւեալ հեղերն ալ կը ծախուին : Պոլիս Լ. մին Էօնիւ Սուճի Պողոս աղայի խանութը, Բեւրոյ Միւս փողոց ճիւղվածաւս խանութները, Թարլա Պաշի ծխախոտաւ Անդրէաս աղայի խանութը Թէ՛ Պոլսոյ և Թէ՛ Ղալաթիոյ քաղաքապետաւս քով :

Տէր և հրատարակչ Միհրան Ս. Գիթապեան :

ՀԱՐՈՒԹԻՄ ՈՒՐ 9 ՄԱՐՏ

ԸՆԴՀ. ՊԱՐՏ. ՍՐԺ

Բաց	12 24
Դոց	12 25
Բարձր զին	12 27
Յած զին	12 19
Թղթագրամ Բաց	563 00
Բարձր	625 00
ցած	556 00
Ժամը 11	620 00
Թոխ. 63ի	Ֆր 069 00
» 65ի	» 074 00
» 69ի	» 069 00
» 73ի	» 065 00
Գանձատու	24 50
Սօսիթէ Ժէնէրալ	4 20
Սօսիթէ Օթօման	3 90
Պաշտ. Բոնիթ.	6.12
Քրէտի Ժէնէրալ	5 05
Թրամիլէյ	1.75
Բում. կրկաթ ուղի	43.75

ԸՆԹԱՅԻՐ ԴՐԱՄՈՑ

(Ու. Կ. 100 իւ. Կ. Կ. Կ.)

Անգլ. սկի	109.28
Դաղղ.	87.14
Բօլ	89.28
Քարպոն արծաթ	16.20
» թղթագրամ	09.00
Քրէմից	51.12
Հինգնոց	19.20
Մէթալիք	20.00
Ճերմակ մէճիտ	07.30
Պղինձ	178.00

ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՄԱՂԱԶԱՆ

ԳՏԵՈՒԱՆ

ՈՒ

ՓԱՆԱՍԷ

Կոչուած ցաւի զեղը բուրոյին լուսեղէններէ բաղադրուած ըլլալով թէ՛ ներսէն և թէ՛ դուրսէն կը գործածուի ու բաղաժութեամբ ցաւեր ու հիւանդութիւններ շտտով կը բժշկէ, ինչպէս որ վարը յիշուած է :

Ամեն տեսակ ֆոլի, Բոտամբ, Կի, մէջքի կամ օղիքներու ցաւեր. ու նաեւ Թանք, Քոլէրա և այլ առաւանդ հիւանդութիւններ ունեցողները այս գեղէն խմելու են հետեւեալ կերպով : Կէս գաւաթ ջուրի մէջ, զիւր ապուրի մը զրգալէն աւելի շաքար, վրան լեցուր անուշի զրգալ մը փանսէ աղէկ մը խառնէ ու խմէ :

Կոկորդի հիւանդութեանց, և Ուռնքի համար զեղը վերոյիշեալ կերպով պատրաստէ ու ժամը կամ երկու ժամը հեղ մը՝ մէկ կամ երկու անուշի զրգալ այն բաղադրութեան խմէ : Յօդացաւի, Բիւմաթիլմի, Ռաքի ցաւի, Ստամբուի ու տեսակ տեսակ կանակի ցաւերու համար գուրսէն փանսէ քսելով աղէկ մը շիւնու է : Այնպիսի ցաւի համար քիչ մը բամպակ փանսէի մէջ թաթխելով ցաւած ակուպին վրայ դնելու է :

Ամեն ատեն երբոր ցաւի մը համար դուրսէն փանսէ քսել հարկ ըլլայ, և թէ քիչ մը ալ խմելու աւելի շտտ բժշկութիւն ըլլայ :

Մարմնոյ պարտած կամ ճնշուած տեղերը բժշկելու համար փանսէ զրգալով կամ փանսէն վրան աղէկ մը լեցնելու է : Գոնաւիւն, կորուսած վերքերը բժշկելու համար՝ արիւնը շարած շտտով մը վերքը կապելու և կապին վրայէն փանսէ լեցնելու է մինչև որ ւաւը

թրջի փանսէն նաեւ արեան շրջանը կարագանէ ու բոլոր բնութիւնը կը զօրացնէ :

Այս գեղին օգտակարութեանը վրայ երկարօ էն գրել աւելորդ կը համարեմք, դործածողները զայն միշտ կը գովեն, ու զսղը կրնայ անձամբ փորձել. գինն աժան է : Կը ծախուի Մ. խանեան և Ընկերաց Ռ. մերիկեան վաճառատունը որ թ Ղալաթիա Կ. Պոլսոյ :

ՀՐԱՆՑ ԱՍՏԱՏՈՒՐ

ՊԱՏԱՆԿԱՆ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

Ռ. սոմանսէր հեղինակն այս գրքուկին մէջ ամփոփած է իւր գրութեանը, որք պատանեկան հասակի մէջ երկնուած. դժուար հաս հոգւոյ մը առաջին զգացումներն և մտածումներն կը պարունակեն :

Կ'ծախուի Լէնի-Ճամի Զին. Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրովաճառաց քով : Գին 75 ամթ թիւ :

ԲԱՆԱԼԻ

ՀԱՅԵՐԵՆ ԵՄԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ

ԳՐԵՑ

Դ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Ահաւասիկ գեղեցիկ միթոս մը Մամուրեան էֆ. Ե. աշխատաւորութեամբ մուտ գտնելով մայրենի լեզուի ուսման մէջ, կ'աւաջնորդէ աշակերտները շարադիր լինելու, չընպասելով որ անոնք քերականութեան տաղտկալի չըլանէն անցին :

Այս գրքուկը Զ. միւնիսթ Տէտէ-Եանեղբարց տպարանէն ի լոյս ընծայուելով կը ծախուի Լէնի-Ճամի Զին. Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրովաճառաց քով : Գին 50 ամթ թիւ :

ՆՈՐ ՕՐԱՅՈՅՑ

1 8 7 9

ԹՈՒԱԿԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Կ'ծախուի Գին 20 փարա մէճիտ

ԸՆԴԱՐԱՎ ԵՄԱՐԱՅՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

1 8 7 9

ԹՈՒԱԿԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Գին 40 փարա մէճիտ

ՏԳՐԵՐՈՒՄ ԶՐԳԵՐԵԱՆ

13 կենդանագիր պատկերներով զարդարեալ սոյն ընդաճակ օրացոյցը բաց ի լուսն օրացոյցն. կ'պարունակէ նաեւ վերջին Ռուս—Տաճկական պատերազմին համառօտ պատմութիւնը, աւողջապահական ամենակարեւոր գիտելիքներ, բարոյական սկզբունք, ներ, խոյթման և այլաբան գեղեր, վնասակար ճճիներ շնչելու կերպեր : Առոյցմէ զատ ազգային նշանաւոր բանաստեղծ Քամաւ Գաթիպայի «Հայերու թուրք» վերնագրով մէկ շաշխարհիկ ոտանաւոր :

Կ'ծախուի Զարդարեան վաճառատունը, Սուլթան Համամ փողոց, Ուլըմէֆէնոյ խանի դիմաց, թիւ 13 և գրովաճառաց քով :

ՏԵՐ ԵՒ ՊԱՏԱՐԱԿԱՆԱՏՈՒ

ՊՕՂՈՍ ՔՐԻՍՏՈՍԻ

ՀԱՐՈՒԹԻՄ ԲԵՐԶԷՄԵՐԵԱՆ

Հար Պաքըր փողոց թիւ 12 :